

000

**ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՏԵՍԱՆԿՅՈՒՆԸ**

Ռ. ԻՇԽԱՆՅԱՆ

Ամեն լեզու, այդ թվում հայերենը, իր բոլոր ձևերի ու նրանց բովանդակային ունակութիւնների միասնութիւն և ամբողջութիւն է: Իրական, կենդանի լեզուն մակարդակների (բառային, ձևաբանական և այլն), մասերի են բաժանում, քերականական կարգեր առանձնացնում (թիվ, հոլովում, խոնարհում, ենթակա, խնդիր և այլն) լեզվաբանները, նաև լեզվաբան-մանկավարժները՝ լեզվի ուսումնասիրման և ուսուցման նպատակով: Դա լեզվի գիտական համակարգումն է, որը, հավանաբար, առավել նպատակասլաց է լինում, երբ ավելի մեծ ճշտությամբ է արտացոլում իրական լեզուն: Մանկավարժական տեսանկյունից մի լեզվի համակարգումը հաջող կարելի է համարել, ըստ երևույթին, այն դեպքում, երբ նրանում ավելի քիչ են հակասութիւնները և ըստ նրա՝ տրվյալ լեզվի օրինաչափութիւնները ավելի յաճ էն հիշվում, դյուրին յուրացվում սովորողների կողմից:

Ներկա հոդվածում մեր նպատակը չէ քննել արդի հայերենի շարահյուսական եղած համակարգումները, նրանց լեզվաբանական արժեքը: Ուզում ենք փորձել հայերենի առավել տարածված շարահյուսական համակարգման սահմաններում որոշել նրա առանձին հատվածների մանկավարժական նպատակասլացութիւնը և այդ տեսանկյունից դրանք առավել նպատակահարմար դարձնելու դիտումով որոշ լրացումներ ու ճշգրտումներ կատարել:

Խոսքը վերաբերում է միայն պարզ նախադասութիւն շարահյուսութեանը, որն, ինչպես հայտնի է, մի լեզվի շարահյուսական համակարգը ներկայացնելու գլխավոր ու հիմնական հատվածն է: Ընդ որում, պետք է անդրադառնանք հայերենի շարահյուսութեան կարգերից միայն երեքին:

1. ԽՆԴԻՐ, ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Հայ քերականագիտութեան մեջ բազմիցս գործածված խնդիր անվանման և ըմբռնման հստակ, որոշակի սահմաններ գծելու փորձ չի արված: Խնդիր ասելով սովորաբար հասկացել են և հասկանում են գոյականով արտահայտված (կամ իբրև գոյական ըմբռնվող) լրացում. այդպես կան՝ բայի խնդիր, կապի խնդիր, գոյականի խնդիր, ածականի խնդիր, մակերայի խնդիր¹: Իսկ նախադասութեան մեջ գոյականով արտահայտված յուրաքանչյուր լրացում հոլով

¹ Ժամանակակից հայերենում խնդիր ունենում են նաև ձայնարկութիւններն ու եղանակավորող բառերը, ինչպես՝ «Երանի նրան» նախադասութեան մեջ երան-ը երանի ձայնարկութեան խնդիրն է:

ունի, քանի որ գոյականի (կամ որպես գոյական ըմբռնվող որևէ բառի) քերականական ամենագլխավոր նշանը հոլով ունենալն է (առանց որի նախադասության մեջ չկա գոյական): Կնշանակի, խնդիր շարահյուսական ըմբռնումը կարող ենք նախապես սահմանել այսպես. նախադասության մեջ խնդիր է հոլով ունեցող ամեն մի լրացում:

Ըստ այսմ, խնդրառություն էլ նշանակում է հոլով ունեցող լրացում ունենալը, այսինքն՝ երբ նախադասության մեջ մի գերադաս անդամ ունենում է իր ստորադասը (լրացումը), որը որևէ հոլով ունի, Այդ կերպ խնդիր են հետևյալ լրացումները (ընդգծված են). Տեսա մի ծով, ծով տեսնել, ծովի ջուր, ծովի մոտ, ծովում լողացա, ոչխարի խուզ, ափից հեռու, արածով ուրախ, իրենից դժգոհ, ծով համբերություն, ծաղիկ հասակ, ոսկի աղջիկ, ակնոցով աղջիկ և այլն: Այժմ ավելացնենք, որ ժամանակակից հայերենում հոլով ունեցող բառի արժեք ունի նաև կապային ձևավորում ունեցող բառը (այսինքն՝ գոյական + կապ ամբողջությունը). այդ կերպ խնդիր են նաև հետևյալները (ընդգծված են)՝ երեխայի մասին խոսեցինք, խոսք հայրենիքի մասին, բարկանալ երեխայի վրա, քնել երկնքի տակ, չի խոսում նրա հետ, մինչև ականջները թաց և այլն:

Այսպիսով, մեր առաջարկած սահմանումը եթե լրացնենք, կունենանք հետևյալը. նախադասության մեջ խնդիր է հոլովային և կապային ամեն մի լրացում:

Եթե այս հստակ ըմբռնումից հրաժարվենք, ուրիշ որևէ ըմբռնում կամ սահմանում տալ չենք կարող, քանի որ անվերջ հակասությունների դուռ կբացվի:

Օրինակ, այլ լեզուների քերականական ըմբռնումների ազդեցության տակ առաջարկում են խնդիր ասելով հասկանալ միայն այն լրացումները, որոնք պահանջվում են տվյալ ձևով կամ կառավարվում են իրենց գերադասների կողմից, իսկ խնդրառության փոխարեն հանձնարարում են գործածել կառավարում: Այսպես, «Նա խուսափում է մարդկանցից» նախադասության մեջ խուսափում է բառի պահանջով մարդիկ գոյականը բացառական հոլով է ստացել, այսինքն՝ խուսափում է-ն վարում կամ կառավարում է մարդկանցից-ը, որը խնդիր է: Իսկ, օրինակ, «Երազում հիշեց» նախադասության մեջ հիշեց-ը չի կառավարում երազում լրացումը, ուրեմն ըստ այդ առաջարկի, երազում-ը խնդիր չէ, և այս դեպքում չկա կառավարում (խնդրառություն): Կամ՝ սեղանի ոտքը բառակապակցության մեջ ոտքը չի կառավարում սեղանի լրացմանը, ըստ հիշյալ առաջարկի դա խնդիր չի դիտվում:

Ըստ այդմ, հայերենի կառավարող ամեն բառ իր հատուկ հոլովը կամ հոլովներն ունի, որոնք նա կառավարում է (համաձայն իր բառաքերականական առանձնահատկությունների):

Առաջին հայացքից այս մոտեցումը թվում է անգամ հրապուրիչ, բայց հենց որ փորձում ենք հայոց լեզվի նյութը համակարգել դրա համաձայն, բացվում է անվերջ շփոթությունների մի շարան: Գլխավոր պատճառն այն է, որ ժամանակակից հայերենի համար անհնար է հոլովային (և կապային) շարահյուսական բոլոր լրացումները երկու մասի բաժանել ըստ այն սկզբունքի, թե որոնք են կառավարվում և որոնք չեն կառավարվում: Ստորև բերում ենք այդպիսի լրացումների մի քանի օրինակ. փորձենք, արդյոք հնարավո՞ր է դրանք կառավարվող և չկառավարվող երկու խմբի բաժանել մի հատուկ սահմանով.

չհասանք տուն

մինչև տուն

բլուրը տուն թվաց

Գեղամը տանն է

արևի վրա

արևի խավարելը

արևի խավարումը

արևի լույսը

երեխային դաստիարակելը

երեխայի սերը

երեխայի խելքը

երեխայի ձեռքը

երեխայից առաջ

արևից վառված

մեխից (նաև մեխին) կախել

գլխարկով ծերուկը

մտնում էր հաշվում

խուսափել քամուց

խուսափումն քամուց

տերևը շարժվում է քամուց

տուն գնացինք

վարպետ ունեմ

վարպետ Օհան

ոսկի շունի

ոսկի աղջիկ

բնկեր Կարո

երեխայի համար

թանաքամանը մաւմարից էր

մորից (նաև մորը) կառչած

գլխով մտածի՛ր

աղջիկը գլխաշոռով էր

մտածում էր դաշտում

բնակվում էր դաշտում

Տվեք այս ցուցակը հայոց լեզվի ցանկացած հինգ կամ տասը ուսուցիչների և կամ ամենահմուտ լեզվաբանների ու խնդրեք, որ բերված բոլոր օրինակները երկու խմբի բաժանեն՝ ըստ կառավարվող ու չկառավարվող լրացումների, և կտեսնեք, որ նույնիսկ երկու հոգի միևնույն բաժանումն արած շեն լինի: Մենք նման փորձ արել ենք, և արդյունքը եղել է պատասխանների բացարձակ անմիասնակութուն և անվերջանալի վեճ: Օրինակ, մեկին թվում է, թե դաստիարակություն բառը հատկապես պահանջում է (կառավարում է) երեխայի ձևը, և երեխայի դաստիարակություն-ը համարում է կառավարում, մի ուրիշը դա կառավարում չի համարում, կառավարում է համարում երեխային դաստիարակելը: Առաջինը, որ երեխայի դաստիարակությունը կառավարում է համարում, տատանվում է, թե արդյոք երեխայի սերը նույնպե՞ս կառավարում է, սեր բառը արդյոք հատկապես պահանջո՞ւմ է այդ հոլովածև, իսկ երեխայի խելք՞, երեխայի ձեռքը՞: Եթե դրանք կառավարում են, ապա սեղանի ոտքը նույնպես կառավարում է, բայց մի՞թե ոտք բառը այդպիսի հոլովածև պահանջելու կամ կառավարելու ներքին հատկություն ունի: Իհարկե, շունի: Ոչ էլ սեր-ն ունի և ոչ էլ դաստիարակությունը, ձեռք-ը կամ խելք-ը: Բայց դա մեր կարծիքով է, կան այլ կարծիքներ էլ, նույնպես բազմազան: Եվ կամ՝ թվում է թե բնակվել բառը պահանջում է (կառավարում է) ներգոյական հոլով, և բրնակվում էր դաշտում, գուցե կարելի է կառավարում համարել (գուցե կարելի է և շհամարել), բայց այդ դեպքում ի՞նչ է մտածում էր դաշտում-ը, չէ՞ որ անհեթեթություն է ասել, թե մտածել-ը ներգոյական հոլով պահանջելու ինչ-որ ներքին ունակություն ունի:

Նույնիսկ հարց է, թե «Տերևը շարժվում է քամուց» նախադասության շարժվում է բայը քամուց բացառականը կառավարո՞ւմ է, թե ոչ, «Գնացինք տուն»՝ Գնացինք-ը տուն-ը կառավարո՞ւմ է, թե՞ ոչ, «Գրոհեցին քաղաքի վրա»։ Գրոհեցին-ը քաղաքի վրա-ն կառավարո՞ւմ է, թե՞ ոչ: Այսպիսի օրինակների անվերջ շարան կարելի է բերել, և ամեն դեպքի մասին կարծիքները տարբեր կլինեն, քանի որ հայերենում չկա կառավարում կոչվածի քերականական որո-

շակի սահման: Հայերենի նյութը հնարավորութիւնն է հիմք չի տալիս բոլոր հոլովային կամ կապային լրացումները միմյանցից զատելու ըստ կառավարվող լինելու և չլինելու հատկանիշի: Ամենաշատը հնարավոր է առանձնացնել անվիճելիորեն կառավարվող միավորները, ինչպես՝ հիանալ մեկով, խուսափել մեկից կամ խուսափումն վտանգից, հպարտանալ մեկով կամ հպարտ մեկով, ընտանիքով հանդերձ, հաց կերավ, տեսավ երեսային, մոտեցավ սեղանին և այլն: Բայց այս տարբերակումը կարելի է անել մի դեպքում, եթե խնդիր համարենք հոլովային կամ կապային ամեն լրացում, իսկ խնդրառութիւնը դիտենք իբրև գերադասի՝ այդպիսի լրացում սոսկ ունենալու փաստ: Դրանից հետո կարելի է տարբերել թույլ և ուժեղ խնդրառութիւն, բայց ոչ բնավ բոլոր խնդիրները այդ երկու տեսակի բաժանելու պայմանով: Պարզապես խնդիրների մեծ բազմութիւնից ընտրում ենք առանձին դեպքեր, որոնցում ակնհայտ է զգացվում, որ գերադասի պահանջով է լրացումը այս կամ այն հոլովը և կամ կապային ձևավորումն ստացել: Ուժեղ խնդրառութիւնն այդ դեպքերն ահա, կարելի է կոչել նաև կառավարում (բայց երևի դա ավելորդ բառ է այսպիսի գործածութեան համար):

Խնդրի և խնդրառութիւն մեր վերը տրված սահմանման դեմ կա նաև մի այլ առարկութիւն: Ասում են՝ ինչպե՞ս կարելի է ուղղական հոլովով դրված լրացումը համարել խնդիր: Օրինակ, վարպետ Օհան, ընկեր Կարո, քար սիրտ, ծով համբերութիւն, ոսկի աղջիկ, ծաղիկ հասակ, դրախտ աշխարհ, տիկին Հերմինե և այլ բազմաթիվ դեպքերում գոյական լրացումը ուղղական հոլովով է դրված: Ասում են, որ դրանց խնդիր կոչել չի կարելի: Բայց չէ՞ որ վարպետ ունեմ, քար ջարդել, ծով տեսա, ոսկի բերեց, ծաղիկ առավ և բազում այլ դեպքերում էլ գոյական լրացումները ուղղական հոլով ունեն և խնդիրներ են: Ապա՝ ինչո՞ւ ծովի ջուր կամ վարպետի գործ բառակապակցութիւններում ծովի և վարպետի տրական հոլով ունեցող ձևերը² խնդիր են, իսկ ծով և վարպետ ուղղականները խնդիր չպետք է լինեն: Եթե ուղղականով լրացման գաղափարը չենք ընդունում, ապա պետք է հրաժարվել արևելահայերենի հինգհոլովյան համակարգից և կրկին որդեգրել յոթհոլովյանը, որ սակայն, իր հերթին, ինչպես ցույց է տրվել, ավելի մեծ ու շատ հակասութիւնների դուռ է բացում:

Ոմանք էլ չափազանց անսովոր լինելով ուղղականով խնդիր ճանաչելուն, այլ հնար են որոնում, ասելով, թե իբր, օրինակ, ծով համբերութիւն, վարպետ Օհան, ոսկի աղջիկ, տիկին Հերմինե, ծաղիկ հասակ դեպքերում ծով-ը, վարպետ-ը, ոսկի-ն, տիկին-ը, ծաղիկ-ը ոչ թե գոյական են, այլ՝ ածական: Անշուշտ, մոռանում են, որ թե բառագիտական, թե քերականական տեսանկյուններից՝ ինչպես բառարանում դրված ծով-ը, այնպես էլ ծով կա, ծով տեսանք, ծով համբերութիւն բառակապակցութիւններում ծով-ը լիովին նույն արժեքն ունի՝ դա գոյական է ուղղական հոլովով:

Եվ այսպես, ժամանակակից հայերենի համար թե լեզվաբանական տրամաբանութեան և թե մանկավարժական նպատակահարմարութեան տեսակետից միակ ճիշտն է հոլով և կապային ձևավորում ունեցող ամեն մի լրացում համարել խնդիր, նրա ամեն մի առկալութիւն գերադասի մոտ՝ խնդրառութիւն (երբեմն թույլ և ուժեղ խնդրառութիւն նշումով):

Բայց այստեղ առաջ է գալիս մի այլ հարց: Զէ՞ որ հայերենի լրացումների

² Գրական արևելահայերենի համար ընդունելով 5 հոլով՝ հատկացուցիչը համարում ենք տրական հոլովով դրված (միշտ առանց որոշիչ հոդի):

ընդունված շարահյուսական համակարգման համաձայն, գոյականի (գոյականական անդամի) լրացումներն են որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, իսկ բայինը (բայական անդամինը)՝ խնդիրներ ու պարագաներ: Բացի սրանցից, կա ստորոգյալի մաս՝ ստորոգելիական վերադիր: Արդ. այն, ինչ վերը բնորոշվեց իբրև խնդիր, ըստ լրացումների ընդունված (և դասավանդող) համակարգումի լինում է որոշիչ, հատկացուցիչ, պարագա, ս. վերադիր: Օրինակ, հասանք տուն՝ ընդգծվածը, ըստ բերված սահմանման, խնդիր է (քանի որ հոլով ունի), բայց և պարագա է, կամ՝ վարպետ Օհան կապակցության մեջ վարպետ-ը խնդիր է, բայց և որոշիչ է, արևի խավարում կապակցության մեջ արևի-ն խնդիր է, բայց և հատկացուցիչ է, երեխայի դաստիարակությունը դեպքում երեխայի-ն խնդիր է, բայց և հատկացուցիչ է, արևից վառված՝ արե-վից-ը խնդիր է, բայց և պարագա է (պատճառի), տղայի բռնիչք՝ տղայի-ն խնդիր է, նաև հատկացուցիչ է, մտնում էր հաշվում՝ մտնում-ը խնդիր է, նաև պարագա է, բնակվում էր դաշտում՝ դաշտում-ը խնդիր է, բայց և պարագա է, բլուրը տուն թվաց՝ տուն-ը խնդիր է, բայց և ս. վերադիր է, թանաքամանը մարմարից է՝ մարմարից-ը խնդիր է, բայց և ս. վերադիր է և այլն:

Դեռ ավելին. ունենք կողմնակի լրացումներ, ասենք, կողմնակի ենթակա, որ նույնպես միաժամանակ խնդիր է, ինչպես՝ արևի խավարելը, արևի դուրս գալը, արևի լուսավորելը և այլն, բոլոր դեպքերում արևի-ն խնդիր է, բայց և կողմնակի ենթակա է:

Մանկավարժական տեսանկյունը պահանջում է հստակություն և համակարգման հետևողականություն: Մանավանդ բուհերի բանասիրական բաժիններում դասավանդելիս՝ քննականոն հարց է առաջանում նախադասությունը վերլուծելիս՝ Գնացքի ուղացումը կապակցության մեջ ուղացում բայանուն գոյականի գնացքի լրացումը ի՞նչ համարել՝ խնդի՞ր, թե հատկացուցիչ: Եթե խնդիր համարվի, կխախտվի գոյականի լրացումների ամբողջ համակարգը, քանի որ ունենք բայանուն գոյականների հսկայական քանակություն՝ վազք, բռնիչք, լող, հապաղում, ընդգրկում, բարձրացում, իջեցում և այլն: Այդ դեպքում դրանց բոլորի համանման լրացումը հատկացուցիչ չպետք է համարենք, այլ՝ խնդիր, ինչպես՝ տղայի վազքը, դրոշակի բարձրացումը և այլն: Բացի դրանից, շատ գոյականներ վիճելի է՝ բայանուն են, թե՛ ոչ, օրինակ սեր, միտք, կար, դիմում, հոլովույթ, հաղթանակ, խաղաղություն, կարծիք, տրտունջ և այսպես շարունակ: Ուրեմն ինչպե՞ս որոշել, թե ինչ է այսպիսիների հոլովային լրացումը. օրինակ՝ պղնձի կարը, մեք հաղթանակը, երկրի խաղաղությունը, Գեորգի կարծիքը և այլն:

Եթե հրապուրվենք ամեն բայանվան կամ ոմանց բայանուն թվացող ամեն մի գոյականի այս կարգի լրացումը դասագրքում և ուսումնական վերլուծությունների ժամանակ համարել սոսկ խնդիր, ապա հատկացուցիչը որպես շարահյուսական միավոր ասպարեզից կսկսի դուրս գալ, և մանավանդ սոսկալի շփոթ կստեղծվի՝ բայանունն ու ոչ բայանունը միմյանցից տարբերելիս: Առավել հստակ է բոլոր դեպքերում հատկացուցիչ համարել գոյականի այն լրացումը, որն ունի տրական հոլով (որոշիչ հոդ չառնող) և ցույց է տալիս հատկացման որևէ տեսակ (պատկանելություն, սերում և այլն):

Բայց չէ՞ որ այս դեպքում էլ խնդիր ըմբռնման ամբողջությունն է խախտվում, որը նույնպես, ինչպես տեսանք, շփոթի դուռ է բացում:

Նույնը վերաբերում է խնդիր-որոշիչներին, խնդիր-պարագաներին, խնդիր-ս. վերադիրներին, խնդիր-կողմնակի ենթականերին և այլն:

Մյուս կողմից, չէ՞ որ լրացումների ընդունված համակարգման մեջ կան բայի խնդիրներ, կապի խնդիրներ, ածականի խնդիրներ և այլն, որոնք այսպես էլ նշվում են ուսումնական վերլուծությունների ժամանակ (ավելի հաճախ՝ բայական անդամի խնդիր, ածականական անդամի խնդիր և այլն):

Եվ այսպես, այն, ինչ ընդհանրապես խնդիր է, ըստ լրացումների ընդունված համակարգման և ուսումնական վերլուծությունների ժամանակ կարող է լինել նաև՝ մերթ հատկացուցիչ, մերթ որոշիչ, մերթ պարագա, մերթ ս. վերադիր և այլն, մերթ էլ մնալ՝ խնդիր (բայի, ածականի, կապի և այլն): Եթե լրացումների ընդունված համակարգումից հրաժարվենք, հոլովային ու կապային բոլոր լրացումները բոլոր դեպքերում պարզապես խնդիր կոչենք (հրաժարվենք հատկացուցիչից, որոշիչից, պարագայից, վերադիրից և այլն), հակասությունը վերանում է: Բայց դա ոչ մանկավարժորեն է, ոչ նպատակահարմար, ոչ էլ հնարավոր է արմատացած այդ սովորույթից հրաժարվելը:

Կարելի է նաև հրաժարվել խնդրի այդ ընդհանուր ըմբռնումից, և միայն ըստ ընդունված համակարգման խնդիրները (բայի, կապի, ածականի և այլն) այդպես կոչել, մյուսները միշտ և միայն՝ հատկացուցիչ, որոշիչ, պարագա, ս. վերադիր, կողմն. ենթակա և այլն: Բայց այս դեպքում էլ անհնար է բացատրել հայերենում կապակցությունից ամենատարածված եղանակը՝ խնդրառությունը. չէ՞ որ հատկացուցիչը, գոյական վերադիրն ու գոյական որոշիչը, կողմն. ենթական և այլն իրենց գերադասի հետ կապակցվում են խնդրառությամբ, այսինքն՝ խնդիր են: Սա կարևոր է ուսուցման գործում:

Ի՞նչ անել: Կա միայն մի ելք՝ ընդունել խնդիր լայն առումով և խնդիր նեղ առումով տարբերակումը: Ըստ այդմ՝ բոլոր հոլովային ու կապային լրացումները համարվում են խնդիր լայն առումով, և նրանց կապակցման եղանակը՝ խնդրառություն: Ապա՝ բայի, կապի, ածականի, մակրայի խնդիրները մնում են խնդիր նաև նեղ առումով: Մյուս լայն առումով խնդիրները նեղ առումով խնդիր չեն, այլ՝ հատկացուցիչ, որոշիչ, պարագա, ս. վերադիր, կողմն. ենթական և այլն:

Այսպես (հաշվի առնել ընդգծվածները). հասանք տուն—լայն առումով խնդիր է, նեղ առումով՝ պարագա, մինչև տուն՝ լայն ու նեղ առումներով խրնդիր է, բուրբ տուն թվաց՝ լայն առումով խնդիր, նեղ առումով ս. վերադիր, Գեղամը տանն է՝ լ. ա. խնդիր, ն. ա. պարագա, արևի վրա՝ լ. ու ն. առումներով խնդիր, արևի խավարելը՝ լ. ա. խնդիր, ն. ա. կողմն. ենթակա, արևի խավարում՝ լ. ա. խնդիր, ն. ա. հատկացուցիչ, արևի լույսը՝ լ. ա. խնդիր, ն. ա. հատկացուցիչ, թանաքամանը մարմարից էր՝ լ. ա. խնդիր, ն. ա. ս. վերադիր, արեվից վառված՝ լ. ա. խնդիր, ն. ա. կողմն. պարագա, գլխով մտածիր՝ լ. և ն. առումներով խնդիր, գլխարկով ծերուկը՝ լ. ա. խնդիր, ն. ա. որոշիչ, ծով համբերություն՝ լ. ա. խնդիր, ն. ա. որոշիչ, բնակվում էր դաշտում՝ լ. ա. խնդիր, ն. ա. պարագա և այլն:

Խնդիր-պարագաների համար ունենք նաև առանձին անուն՝ պարագայական խնդիր, որը կարելի է գործածել:

Հայերենի շարահյուսական նյութը հնարավորություն է տալիս խնդիրների լայն ու նեղ այս տարբերակումը հետևողականորեն կիրառել: Օրինակ, գոյականի բոլոր կարգի լայն առումով խնդիրները հնարավոր է նեղ առումով հատկացուցիչ կամ որոշիչ (մականուն) համարել: Այսպես՝ խոսք հայրենիքի մասին բառակապակցությունից մեջ հայրենիքի մասին—ը գոյականի խնդիրն է լայն առումով, նեղ առումով այն որոշիչ է. մտածում ենք այսպես՝ ինչպիսի խոսք՝

հայրենիքի մասին խոսք, կամ՝ հաղթանակ հեռավոր տափաստանում՝ ընդգրծվածը խնդիր է լայն առումով, որոշիչ նեղ առումով (ինչպիսի՞ հաղթանակ, դերբայի իբր եղած զեղչումը վերականգնելն արհեստական է և պետք չէ), բըծըշկություն օձի թույնով բառակապակցության մեջ օձի թույնով-ը բծշկություն գոյականի խնդիրն է լայն առումով, որոշիչը նեղ առումով (ինչպիսի՞ բծըշկություն), հարձակում հակառակորդի վրա՝ հակառակորդի վրա-ն լայն առումով խնդիր է, նեղ առումով՝ որոշիչ (ինչպիսի՞ հարձակում) և այլն:

Լայն ու նեղ առումներով խնդիրների զանազանման այս մոտեցմամբ և՛ պահպանվում է շարահյուսական լրացումների ընդունված համակարգումը, և՛ միաժամանակ նշվում է, թե լրացումներից որոնք են կապված խնդրառությամբ, այսինքն՝ որոնք են լայն առումով խնդիր և որոնք այդպիսիք չեն, այլ կապակցված են առդրությամբ:

Ինչպես հայտնի է, հայերենում խնդրառությանը հակադրվում է առդրությունը, որը հակառակ խնդրառության պետք է սահմանել որպես գերադասի կապակցություն այնպիսի լրացումների հետ, որոնք չունեն հոլով և կապային ձևավորում: Արդի հայերենում պարագաների, որոշիչների և ս. վերադիրների մի մասը կապակցվում է խնդրառությամբ, մյուս մասն՝ առդրությամբ: Այս հակադրությունը պատկերացնելուն էլ օգնում է խնդրառության վերը նշված սահմանումը, ինչպես և լայն ու նեղ առումներով խնդիրների տարբերակումը:

2. ԲԱՅԻ (ԲԱՅԱԿԱՆ ԱՆԳԱՄԻ) ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՐԿՈՒ ՏՅՍԱԿ

Արդի հայերենի ընդունված քերականական համակարգման համաձայն բայերը լինում են երկու տեսակ՝ ա) դիմավոր, բ) անդեմ կամ դերբայներ³: Այս բաժանման մեջ տրամարանական թեկուզ որոշ հետևողականություն պահպանելու համար անդեմ բայ կամ դերբայ ասելով պետք է հասկանանք միայն ազատ գործածվող դերբայները՝ անորոշ, հարակատար, ենթակայական, մակրայական (—իս), որոնք և արդի հայերենի իսկական դերբայներն են:

Փամանակակից հայերենում դիմավոր բայն ունենում է ենթակա, խնդիր, պարագա, ս. վերադիր: Սրանցից երկուսը՝ խնդիրն ու պարագան ըստ ընդունված շարահյուսական համակարգման համարվում են լրացում, ենթական համարվում է գլխավոր անդամ, թեև ոչ թե դիմավոր բայի, այլ որևէ տեսակ (բայական, անվանական և այլն) ստորոգյալի հետ. դիմավոր բայի հետ նրա ունեցած հարաբերությունը չի պարզաբանվում, քանի որ բայը որպես նախադասության անդամ չի նախատեսվում և չի ընդունվում: Ս. վերադիր և դիմավոր բայի հարաբերությունը նույնպես լռության է մատնվում, վերոհիշյալ նույն պատճառով:

Անդեմ բայերը (դերբայները) ըստ նույն համակարգման նույնպես ունենում են ենթակա, խնդիր, պարագա, ս. վերադիր. այս դեպքում սրանք բոլորը դիտվում են իբրև լրացում (անդեմ բայի):

Արդ. մի կողմ թողնենք այսպիսի համակարգման հակասականությունը (որ դիմավոր բայի համար ենթական և ս. վերադիրը լրացում չեն, իսկ անդեմ բայի համար լրացում են), իրողությունն այն է, որ թե դիմավոր և թե անդեմ բայի համար խնդիրները, ինչպես և պարագաները նույնաբանությ լրացումներ են: Այսպես, մտանցա սեղանին և սեղանին մոտենալիս օրինակներում սեղա-

³ Ըստ այլ համակարգումների (օրինակ, արեղյանական) բայը միայն դիմավոր է:

նին-ը բովանդակութեամբ և ձևով նույն լրացումն է կամ՝ ձու գողացալ և ձու գողացող օրինակներում ձու-ն նույնաբնույթ լրացում է: Նույնն են պարագաները՝ տուն գնաց և տուն գնալիս, անձրեկից թրջվեց և անձրեկից թրջված և ալն:

Սակայն դժվար է կամ անհնար զուտ քերականական ընդհանուր սահմանում տալ թե դիմավոր բայի, թե դերբայի խնդրին կամ պարագային: Օրինակ, եթե ուղիղ խնդիրը զուտ քերականորեն սահմանում ենք որպես ներգործական կառույցը կրավորականի փոխակերպելիս ենթակա դարձող լրացում (Նա ձու գողացալ և Ձուն գողացվեց նրա կողմից), ապա դերբայի ուղիղ խնդիրը փոխակերպման այս հատկութունից զուրկ է (ձու գողացողը-ը չունի ձու գողացվող փոխակերպում): Իսկ քանի որ անուղղակի խնդիրները սովորաբար սահմանվում են որպես ուղիղ խնդրի քերականական նաև հիշյալ հատկութունից զուրկ լրացումներ, կնշանակի բարդանում է նաև դերբայի անուղղակի խնդրի սահմանումը: Ամեն դեպքում, սակայն, սահմանման այս հարցը երկրորդական է այն ընդհանրության համեմատ, որ ունեն դիմավոր բայի և դերբայի այդ երկու լրացումներից յուրաքանչյուրը:

Մինչդեռ, դիմավոր բայի ենթական և ս. վերադիրը լիովին տարբեր միավորներ են դերբայի ենթականի և ս. վերադրի համեմատ: Սա այսպես է հատկապես այժմ ընդունված և դասավանդվող շարահյուսական համակարգման տեսակետից. Գագիկը գնաց և Գագիկի գնալը օրինակներից առաջինում դիմավոր բայի հետ Գագիկը (դիմ. բայի ենթական) համաձայնել է դեմքով և թրջվով, դրված է ուղղական հոլովով, մինչդեռ երկրորդ օրինակում Գագիկի միավորը (անդեմ բայի «ենթական») գնալը դերբայի հետ որևէ կերպ չի համաձայնել և դրված է ոչ թե ուղղական, այլ տրական հոլովով: Նույնը և այնպիսի դեպքերում, ինչպիսիք են՝ ուսուցիչը պատրաստեց և ուսուցչի պատրաստածը, կատուն կերպ և կատվի կերածը, եղջերուն նկատեց և եղջերուի նկատելը և այլն:

Ըստ բովանդակության էլ (ներկայիս համակարգման համաձայն) լիովին տարբեր են դիմավոր բայի և դերբայի ենթակաները. ենթական սահմանվում է որպես մի բան անող և լինող կամ այն անդամը, որին ստորոգյալը վերագրում է հատկանիշ, մինչդեռ դերբայի «ենթական» մի բան անող ու լինող չէ, ոչ էլ ստորոգյալ ունի, որ իրեն հատկանիշ վերագրի: Դերբայի «ենթական» պարզապես լրացում է, խնդիր (լայն առումով):

Ըստ այժմ ընդունված համակարգման ս. վերադիրը արտահայտում է ենթականի հատկանիշը, որը դիմավոր բայը (այսպես կոչված՝ հանգույցը) վերագրում է ենթականին, մինչդեռ դերբայի «ս. վերադիրը» այդպիսի դեր չի կատարում: Օրինակ, «Կղզին կոչվեց Ախթամար» նախադասության մեջ Ախթամար ս. վերադիրը արտահայտում է կղզին ենթականի հատկանիշը (կամ հատկանիշի մի մասը), որը կոչվեց դիմավոր բայը վերագրում է նույն ենթականին: Մինչդեռ Ախթամար կոչված բառակապակցության մեջ կոչված դերբայի Ախթամար «ս. վերադիրը» հասկանալի է, որ նման դեր չի կատարում, այլ պարզապես այդ դերբայի խնդիրն է (լայն առումով):

Արդ. դերբայի այս հիշյալ շորս լրացումները կարելի է երկու կերպ համակարգել. ա) դերբայների խնդիրներն ու պարագաները շտաբերակել դիմավոր բայերի խնդիրներից և պարագաներից, բոլորը միասին ներկայացնել, իսկ դերբայների «ենթականներն» ու «ս. վերադիրները» ներկայացնել ենթականերից ու ս. վերադիրներից առանձին, իրև դերբայներին հատուկ լրացումներ: բ) Դիմավոր բայի ենթական, ս. վերադիրը, խնդիրներն ու պարագաները ներկայացնել մի համակարգով, այժմ ընդունված հերթականությամբ և բովան-

դակությամբ (ենթական գլխավոր անդամ, ս. վերադիրը ստորոգյալի մաս, խնդիրներն ու պարագաները՝ լրացումներ): Ապա՝ դերբայների բոլոր շորս լրացումները ներկայացնել նույնպես մի խմբով, որպես ենթահամակարգ: Դասավանդման մեր փորձը ցույց է տվել, որ այս երկրորդ համակարգումը մանկավարժորեն ավելի նպատակասլաց է, սովորողները ավելի շուտ և ավելի դյուրին են ըմբռնում երևույթները: Միայն մանկավարժական տեսանկյունից անհրաժեշտ է դիմավոր բայի ենթակայից, ս. վերադիրից, խնդիրից ու պարագայից տարբերելու համար անդամ բայերի նույնանուն լրացումները գոնե փոքրինչ տարբերակել նաև անվանումներով: Մենք ունենք ավանդական կողմնակի բառը, որը իբրև զուտ պայմանական մի նշան դնելով ենթակա, ս. վերադիր, խնդիր (ուղիղ և անուղղակի), պարագա անվանումների վրա ունենում ենք դերբայների շորս լրացումների ավանդական (անշուշտ պայմանական) անուններ: Այդ դեպքում կողմնակի ենթակա նշանակում է պարզապես դերբայի «ենթակա», կողմնակի ս. վերադիր՝ դերբայի «ս. վերադիր», կողմնակի խնդիր՝ դերբայի խնդիր, կողմնակի պարագա՝ դերբայի պարագա:

Այս համակարգմամբ և անվանումներով սովորական (դիմավոր բայի) ենթական, ս. վերադիրը, խնդիրները և պարագաները հստակորեն են տարբերակվում դերբայների շորս լրացումներից, միաժամանակ, անշուշտ, բացատրվում են ենթակայի և կողմնակի ենթակայի, ս. վերադրի և կողմն. ս. վերադրի տարբերությունները, ինչպես և խնդիրների ու կողմն. խնդիրների, պարագաների ու կողմն. պարագաների ընդհանրություններն ու տարբերությունները:

Իսկ երբ կողմնակի խնդիրներն ու պարագաները միացնում ենք (խառնում) դիմավոր բայերի խնդիրներին ու պարագաներին և միայն առանձին ենք ներկայացնում կողմնակի ենթական ու կողմնակի խնդիրները, ապա սովորողների պատկերացումներում անհստակություն է առաջանում, եթե չսսենք շփոթ՝ մի դեպքում դերբայի լրացումները ջրկվում են, մյուս դեպքում՝ ոչ: Այսինքն՝ խախտվում է հետևողականությունը, իսկ անհետևողական դասդասումը հակառակ է մանկավարժական համակարգման:

3. ՆԱԽԱԿԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՍ ԸՄԲՐՈՒՄԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Հայ շարահյուսագիտության մեջ ընդհանրապես նախադասության անդամ ըմբռնումը ոչ հստակորեն սահմանված է, ոչ էլ որոշված են նրա քերականական սահմանները, չկա նույնիսկ (ոչ ոք չի փորձել տալ) հայերենի նախադասության անդամների լրիվ ցուցակը: Օրինակ, անհայտ է, թե ս. վերադիրը կամ հանգույցը նախադասության անդամնե՞ր են, թե՛ ոչ. ոմանք կոչում են նախադասության անդամ, ոմանք՝ ոչ. կամ նույն հեղինակը նույն ս. վերադիրը մերթ նախադասության անդամ է կոչում, մերթ՝ ոչ: Վեճ կա կոչականի վերաբերյալ. նախադասության անդամ է, թե ոչ: Կամ ի՞նչ է, օրինակ, կողմնակի ենթական՝ նախադասության անդամ է, թե ոչ: Սրա որոշակի պատասխանն էլ չեք գտնի հայերենի շարահյուսությանը նվիրված աշխատություններում: Վերջապես, եթե նախադասության մեջ եղած որևէ անդամ նախադասության անդամ չպետք է համարվի, ապա ի՞նչ պետք է համարվի: Սրա հստակ պատասխանն էլ չկա գրականության մեջ:

Այժմ սակայն այդ հարցերի մասին չէ, որ մի երկու խոսք պիտ սսենք, այլ պետք է փորձենք խոսել ընդհանուր ճանաչում գտած նախադասության անդամ-

ներից մի քանիսի մասին՝ փորձելով պարզել ո՞ր դեպքում է մանկավարժորեն նպատակահարմար նախադասութեան մեջ գործածված ամբողջ բառակապակցութիւնը համարել նախադասութեան մեկ անդամ, ո՞ր դեպքում՝ միայն բառակապակցութեան գերադաս անդամը:

Ինչպես հայտնի է, նախադասութեան անդամ լինում են. ա) մի բառը, բ) մեկ բառակապակցութիւնը, գ) մի պարզ նախադասութիւնը: Առաջին և երրորդ դեպքում նախադասութեան անդամի սահմանը համեմատաբար պարզ է. օրինակ, «Զիտսելը ոսկի է» նախադասութեան մեջ անվիճելի է, որ ենթակա նախադասութեան անդամն է շիտսելը, «Քվում է, թե նա կգա» բարդ նախադասութեան մեջ պարզ է, որ ենթական է նա կգա նախադասութիւնը: Սակայն երբ գործ ենք ունենում նախադասութեան մեջ տեղ գտած բառակապակցութեան հետ, ապա մոտեցման տարբերակներ են առաջանում:

Գաղտնիք չէ, որ այդ հարցում էլ հայ շարահյուսագիտութեան մեջ որևէ հստակութիւն չկա: Դպրոցներում, բուհերում շարահյուսական վերլուծութիւնների ժամանակ բառակապակցութեամբ արտահայտված միևնույն անդամը որոշելիս՝ մերթ ամբողջ բառակապակցութիւնն են նկատի ունենում, մերթ՝ միայն գերադաս անդամը: Օրինակ. «Լավ սովորելը առաքինութիւն է» նախադասութեան մեջ մի մոտեցմամբ ենթական է սովորելը, մի այլ մոտեցմամբ՝ լավ սովորելը: Նույնը և «Ուսուցչի հանձնարարութիւնները ճշգրիտ կատարելը առաքինութիւն է» նախադասութեան մեջ մեկը ենթակա է համարում կատարելը գերադաս անդամը, մի ուրիշը՝ ամբողջ դերբայական բառակապակցութիւնը (ընդժված է), մի երրորդը՝ ճշգրիտ կատարելը բառակապակցութիւնը: «Գուրգենի հայտնվելը մեզ զարմացրեց. ո՞րն է ենթական՝ հայտնվե՞լը, թե Գուրգենի հայտնվելը. դարձյալ տարբեր են պատասխանները: «Հայտնվեց գյուղից նոր վերադարձած երիտասարդը». ո՞րն է որոշիչը՝ վերադարձած-ը, նոր վերադարձած-ը, թե գյուղից նոր վերադարձած-ը: Դարձյալ մոտեցումները տարբեր են լինում:

Այլ օրինակ, «Ըստ հարգում եմ ուսուցչի հանձնարարութիւնները բարեխղճներին կատարողին». ո՞րն է խնդիրը՝ կատարողի՞ն-ը, թե ամբողջ ընդգծված բառակապակցութիւնը, գուցե միայն բարեխղճներն կատարողին բառակապակցութիւնը: Դարձյալ տարբեր ուսուցիչներ կամ լեզվաբաններ տարբեր պատասխան են տալիս: «Աշտուր ուսուցչի հանձնարարութիւնները խմբակարարելի դեպքում են» նախադասութեան մեջ ոմանք ս. վերադիր են համարում կատարողն բառը, ուրիշներն ամբողջ բառակապակցութիւնը (ընդգծված է), երրորդները բարեխղճ կատարողն բառակապակցութիւնը:

Թողնենք դերբայական բառակապակցութիւնը, ուշադրութեան առնենք այլ կարգի բառակապակցութիւններ: «Օհանի տղան եկավ» նախադասութեան մեջ ո՞րն է ենթական՝ Օհանի տղա՞ն, թե՞ տղան, «Տեսա Օհանի տղային». ո՞րն է խնդիրը՝ Օհանի տղա՞յին-ը, թե՞ տղային-ը, «Մեր Օհանի տղան եկավ». ո՞րն է ենթական՝ մեր Օհանի տղա՞ն, Օհանի տղա՞ն, թե՞ միայն տղա՞ն: Կամ՝ «Իրենից միշտ դժգոհ քեռայրս այդ օրը ինքնագոհ էր թվում» նախադասութեան մեջ քեռայրս-ի որոշիչը ո՞րն է՝ դժգոհ-ը, իրենից միշտ դժգոհ-ը, թե՞ միշտ դժգոհ-ը: Այս դեպքում էլ հազիվ թե կարիծքների մի ինչ-որ միասնութիւն լինի:

Իհարկե, նախադասութեան լրիվ՝ մինչև շարահյուսական նվազագույն միավորը՝ բառը (իր սվյալ ձևով) վերլուծման դեպքում ենթակա, խնդիր կամ մի այլ անդամ համարված ամբողջ բառակապակցութիւնն ի վերջո լրիվ վերլուծվում է. օրինակ, «Ուսուցչի հանձնարարութիւնները ճշգրիտ կատարելը

առաքինութիւնն է» վերը բերված նախադասութեան մեջ եթե ենթական համարենք ամբողջ բառակապակցութիւնը (ընդգծված), միևնույն է, այն պիտի վերլուծվի՝ ուսուցչի—հատկացուցիչ, հաննձարարութիւնը—կողմն. ուղ. խնդիր, ճշգրիտ—կողմն. ձևի պարագա, կատարելը—գերադաս անդամ: Իսկ եթե ենթակա համարենք միայն կատարելը, պետք է դարձյալ նշենք նրա լրացումներն ու լրացման լրացումները՝ նույն կերպ: Կամ եթե «Օհանի տղան եկավ» նախադասութեան մեջ ենթակա համարենք Օհանի տղան բառակապակցութիւնը, միևնույն է, այն պետք է վերլուծվի՝ Օհանի—հատկացուցիչ, տղան—գերադաս անդամ: Իսկ եթե ենթակա համարենք միայն տղան, ապա պետք է նշվի, որ Օհանի-ն նրա հատկացուցիչն է և այլն:

Բայց սրանով հանդերձ, ակնհայտ է, որ բառակապակցութիւնների դեպքում նախադասութեան անդամի սահմանը որոշելը մեր շարահյուսագիտութեան մեջ և ուսուցման ասպարեզում խիստ տարբերաց է, և լավ կլինի, եթե գոնե որոշ միասնականութիւն ստեղծվի:

Ոմանք էլ առաջարկում են տարբերել դերբայական բառակապակցութիւնները գոյականական բառակապակցութիւններից. առաջին դեպքում ամբողջ բառակապակցութիւնը համարել նախադասութեան անդամ, երկրորդ դեպքում՝ միայն բառակապակցութեան գերադաս անդամը: Բայց չէ՞ որ կան նաև ածականական, մակբայական բառակապակցութիւններ, որոնք ավելի նման են դերբայականներին: Եվ ապա՝ բառակապակցութիւնների մեջ դրվող այգպիսի խտրականութիւնը սովորողների, նաև ուսուցիչների ու լեզվաբանների համար նորանոր շփոթութիւնների դուռ կբացի: Բառակապակցութիւնների մեջ այս առիթով խտրականութիւնը դնելը ճիշտ չէ՞ գերադաս անդամ, թե ամբողջ բառակապակցութիւնը: Հարցը լուծելիս հիմնավոր չէ առաջնորդվել այն բանով, թե բառակապակցութեան գերադասը դերբայ է (այդ թիւում ենթակայական—տե՛ս վերը բերված օրինակը՝ ուսուցչի հանձնարարութիւնները բարեխղճութեան կատարողն), գոյական, ածական, թե՞ մակբայ:

Միայն կապային բառակապակցութիւնների դեպքում է, որ կա ինչ-որ միասնական մոտեցում՝ այն էլ միայն այն դեպքում, եթե կապի խնդիրը մեկ բառով է արտահայտված. այսպիսի դեպքերում ամեն մի կապային բառակապակցութիւն միշտ էլ նախադասութեան մեկ անդամ է համարվում. օրինակ (ընդգծվածները մեկ անդամ են)՝ «Սեղանի տակ կատու կար», «Քարավանը դեպի քաղաք էր շարժվում», «Խոսում էին նորեկի մասին» և այլն, թեև այս դեպքում էլ անհայտ է թե՞ արդյոք կապային բառակապակցութեան ամեն մի անդամ (սեղանի և տակ, դեպի և քաղաք) իր հերթին ի՞նչ է՝ նախադասութեան անդամ, թե մի այլ բան (ի՞նչ), գուցե հենց բառակապակցութեան անդամ (այս վերջին որոշմանն էլ խանգարում է այն, որ շատերը կապային բառակապակցութիւնը բառակապակցութիւն չեն համարում, քանի որ կապը լիարժեք բառ չեն համարում):

Ինչ վերաբերում է կապային այն բառակապակցութիւններին, որոնց կապի խնդիրը լրացումներ ունի (ինքը բառակապակցութիւն է), ապա այս դեպքում էլ որե՛է միասնութիւն չկա. օրինակ, «Տան մեծ ու կլոր սեղանի տակ կատու կար» նախադասութեան մեջ ո՞րն է կապի խնդիրը՝ սեղանի-ն, թե տան մեծ ու կլոր սեղանի-ն, — չկա որե՛է միասնական լուծում:

Ինչևէ. ստորև առաջարկներ ենք անում՝ թե նախադասութեան ո՞ր անդամը որոշելիս՝ ինչն է նպատակահարմար դիտել որպես այդ անդամ՝ ամբողջ բառակապակցութիւնը, թե՞ միայն գերադաս անդամը: Մեր առաջարկներն ա-

նում ենք զուտ ուսուցման նպատակահարմարությունից ելնելով, ընդ որում, ոչ իբրև մի վերջնական համոզում, այլ իբրև դասավանդման մեր փորձից արված հետևություն: Մեր առաջարկներն անում ենք նախադասություն ընդունված անդամների միայն մի մասի վերաբերյալ, որոնց նկատմամբ մեր ունեցած կարծիքը մեզ բավական հիմնավոր է թվում: Անշուշտ, կուզենայինք իմանալ մեր առաջարկների նկատմամբ ուրիշների կարծիքները:

ա) Ծնթակա.— Բոլոր կարգի ազատ բառակապակցությունների դեպքում ենթակա համարել միայն գերադաս անդամը՝ արտահայտված գոյականով, դերանվամբ, դերբայով, ածականով և այլն: Օրինակ, «Քաղաքի բոլոր փողոցները դարձել էին բանուկ» (հանդարդյան) նախադասության մեջ ենթակա համարել ոչ թե քաղաքի բոլոր փողոցները բառակապակցությունը, այլ փողոցները գերադաս անդամը: «Նրա հայացքում սիրո թե փաղաքշանքի պես մի բան զգացվեց» (Մաթևոսյան),— ենթական է բանը: «Դժվար է համաձայնել բազմահմուտ գիտնականների այս վարկածի հետ»,— ենթակա համարել ոչ թե համաձայնել բազմահմուտ գիտնականների այս վարկածի հետ բառակապակցությունը, այլ համաձայնել գերադաս անդամը:

Կայուն բառակապակցությունը, թերևս, ավելի ճիշտ է ամբողջությամբ դիտել ենթակա. օրինակ, «Անցողական բայերը պահանջում են ուղիղ խնդիր»— ենթակա համարել անցողական բայերը բառակապակցությունը: «Հովհաննես Թումանյանը ծնվել է 1869 թ.»,— ենթական է Հովհաննես Թումանյանը բառակապակցությունը:

բ) Խնդիրներ (ուղիղ և անուղղակի).— Խնդիրներն առհասարակ սահմանազատել այնպես, ինչպես ենթական. ազատ բառակապակցությունների դեպքում խնդիր համարել միայն գերադաս անդամը, ինչպես. «Պատահամար իմացա-նրանց այգու ճանապարհը» (Բակունց) նախադասության մեջ խնդրային բառակապակցությունն է նրանց այգու ճանապարհը, խնդիր համարել միայն ճանապարհը: Կամ՝ «Գիտնականը Հայաստանում ծանոթացավ ճարտարպետական կրթության դրվածքին» («Հայրենիքի ձայն»). այստեղ ճարտարպետական կրթության դրվածքին ազատ բառակապակցությունից խնդիր համարել միայն դրվածքինը:

Բացառություն են կազմում կապային ազատ բառակապակցությունները, որոնք ամբողջությամբ են խնդիր համարվում: Օրինակ. «Ու ծիծաղում եմ ձեր բախտի վրա» (Տերյան) նախադասության մեջ խնդիրն է բախտի վրա բառակապակցությունը կամ՝ «Թակարդը նրա համար բացել էր ինքը» (Մաթևոսյան) նախադասության մեջ խնդիր է համարվում նրա համարը:

գ) Կապի խնդիրը մյուս խնդիրների պես է սահմանազատվում. ազատ բառակապակցության դեպքում կապի խնդիր է համարվում միայն գերադաս անդամը, օրինակ՝ «Ծս տեսա քեզ իմ ճամփի մոտ» (Տերյան) նախադասության մեջ մտ կապի խնդիրը համարել ոչ թե իմ ճամփի բառակապակցությունը, այլ ճամփի բառը: Կայուն բառակապակցությունները, մասնավանդ երբ հատուկ անուն են, ամբողջությամբ համարել կապի խնդիր: Օրինակ՝ «Հանդիպեցինք Կարապի լճի մոտ» նախադասության մեջ կապի խնդիր համարել Կարապի լճի բառակապակցությունը:

դ) Պարագաներ, ս. վերադիր, որոշիչ, բացահայտիչ, կոչական.— Բառակապակցությամբ (թե ազատ, թե կայուն) արտահայտված լինելու դեպքում ոչ թե գերադաս անդամը, այլ ամբողջ բառակապակցությունը համարել պարագա,

վերադիր, որոշիչ, բացահայտիչ, կոչական: Օրինակներ (ընդգծված են բառակապակցությամբ արտահայտված վերոհիշյալ անդամները). պարագա՝ «Հաթամի աղջիկն այդ նամակն ստանալու մյուս օրը գնաց Խանունց արտը քաղհանելու» (Բակունց), ս. վերադիր՝ «Նա և Այվազյանը գյուղինստիտուտում եղել են իմ աղջկա և որդու դասախոսները» («Հայրենիքի ձայն»), որոշիչ՝ «Այս տարվա գարնանը Երևանում կայացած համամիութենական փառատոնում մրցանակ շահած կոլեկտիվներին որպես պարգև հանձնում էին այդպիսի ծաղկեփնջեր» («Հայր. ձայն»), բացահայտիչ՝ «Իմ ուղեկիցը՝ նիհար ու բարի աչքերով երևանցի Հովհաննեսը, պատմում է...» (Բակունց), կոչական՝ «Հապալցրեք, իմ քաջ հյուրեր» (Թումանյան):

բ) Ստորոգյալ.— Ստորոգյալը արտահայտվում է թե մեկ բառով՝ դիմավոր բայով, թե այնպիսի կապակցություններով, որոնց գերադաս անդամն է մի դիմավոր բայ. օրինակ, «Շատ հին ժամանակ մի թագավոր կար» (Ղ. Աղայան) նախադասության մեջ ստորոգյալն է կար մեկ բառը, «Սայլը ճռնչում էր օր ու գիշեր» (Բակունց). այստեղ ստորոգյալն է ճռնչում էր մեկ բառը, իսկ «Դուռուկն արցունքի աղբյուր է» («Գարուն») նախադասության մեջ ստորոգյալն է արցունքի աղբյուր է կապակցությունը:

Այս կերպ միմյանցից տարբերվում են պարզ (միայն մեկ բառով՝ դիմավոր բայով, արտահայտված) և բաղադրյալ (դիմավոր բայով կազմված բառակապակցությամբ արտահայտված) ստորոգյալները:

Նախադասության այլ անդամների վերաբերյալ դժվարանում ենք առաջարկներ անել: Օրինակ, ինչպե՞ս վարվել հատկացուցիչ դեպքում. հատկացուցիչը մի կողմից խնդիր է (մանավանդ քերականորեն նման՝ կապի խնդրին), և ճիշտ կլինի բառակապակցության դեպքում մյուս խնդիրների պես հատկացուցիչ համարել միայն գերադաս անդամը, ինչպես՝ «Մենք լսեցինք Լիտվայից մեզ հյուր եկած ուսուցչուհու խոսքը» նախադասության մեջ հատկացուցիչ համարել միայն ուսուցչուհու գերադասը: Բայց մյուս կողմից հատկացուցիչը մականուն է, շատ նման որոշիչին, և այս տեսակետից նպատակահարմար է թվում որոշիչի պես հատկացուցիչ համարել ամբողջ բառակապակցությունը, տվյալ դեպքում՝ Լիտվայից մեզ հյուր եկած ուսուցչուհու-ն: Որոշում հանել դժվարացանք:

Այն բոլոր դեպքերում, երբ նախադասության անդամ ենք համարում բառակապակցությունը, նրա գերադաս անդամը կարող է կոչվել նաև բուն օրոշիչ, բուն ս. վերադիր, բուն պարագա: Օրինակ, վերը բերված՝ այս տարվա գարնանը Երևանում կայացած համամիութենական փառատոնին մրցանակ շահած որոշիչ-բառակապակցության գերադաս անդամը՝ շահած-ը կարող է կոչվել նաև բուն որոշիչ, այս տարվա գարնանը Երևանում կայացած որոշիչ-բառակապակցության գերադասն էլ կայացած-ն է, որը նույնպես կարող է տվյալ դեպքի համար բուն որոշիչ կոչվել: Կամ վերը բերված՝ իմ աղջկա և որդու դասախոսները ս. վերադիր-բառակապակցության գերադասը՝ դասախոսները, կարող է կոչվել բուն ս. վերադիր և այլն:

Երբ նախադասության անդամ է համարվում բառակապակցությունը, ապա նրա մեջ մտնող յուրաքանչյուր միավորը կարող է կոչվել ոչ թե նախադասության անդամ, այլ՝ բառակապակցության անդամ: Հիշենք վերը բերված օրինակը. այս տարվա գարնանը Երևանում կայացած համամիութենական փառատոնում մրցանակ շահած բառակապակցությունը նախադասության մեկ անդամ է (որոշիչ), սրա կազմի մեջ են մտնում 1) այս տարվա գարնանը Երե-

վանում կայացած (նույնպես որոշիչ), 2) համամիութենական փառատոնում (կողմն. պարագա), 3) մրցանակ (կողմն. ուղ. խնդ.), 4) շահած (գերադաս անդամ) երկու բառակապակցությունները և երկու բառերը, որոնք նշված ծավալուն բառակապակցության անդամներ են: Իսկ երկու բառակապակցությունների կազմի մեջ մտնող բառակապակցությունները և բառերը այդ բառակապակցություններից ամեն մեկի անդամներն են. օրինակ՝ առաջին բառակապակցության շորս անդամներն են՝ ա) այս տարվա գարնանը բառակապակցությունը (կողմն. պար.), Երևանում (կողմն. պար.), կայացած (գեր. անդ.), իսկ՝ այս տարվա գարնանը բառակապակցության անդամներն են. ա) այս (որոշիչ), տարվա (հատկ.), գարնանը (գեր. անդ.):

Նախադասության և բառակապակցության անդամների բնույթը և անվանումները որոշ դեպքերում մնում են նույնը, այլ դեպքերում՝ տարբեր: Օրինակ, հատկացուցիչ, որոշիչ, բացահայտիչ, կապի խնդիր միավորները բոլոր դեպքերում՝ թե իբրև նախադասության, թե բառակապակցության անդամ, նույնն են, մինչդեռ միայն նախադասությանը հատուկ ենթակա, խնդիր, պարագա, ս. վերադիր անդամները նույն անվանումներով չեն լինում բառակապակցություններում, որտեղ ունենք՝ կողմնակի ենթակա, կողմնակի խնդիրներ, կողմնակի պարագաներ, կողմնակի վերադիր:

Իսկ ստորոգյալը միայն նախադասության անդամ է լինում (բառակապակցության անդամ ստորոգյալ չկա):

Р. А. ИШХАНЫН — Педагогический аспект синтаксической систематизации материала армянского языка. — Не затрагивая основных положений синтаксической системы, принятой в настоящее время в учебниках и пособиях по современному армянскому языку, автор предпринимает попытку некоторой детализации и уточнения отдельных положений этой системы с точки зрения педагогической целесообразности. В этом аспекте рассматриваются вопросы классификации приглагольных, применных и других дополнений, особенности управления в случаях, когда они выражены словосочетаниями.